ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

(գիտական հոդվածների ժողովածու)

Երևան
«ԱՍՈՂԻԿ»
2016

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37
Ա 597

Հրատարակվում է Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի գիտական խորհրդի երաշխավորմամբ

Գրախոս՝
հոգեբանական գիտությունների դոկտոր
ՌՈՒԲԵՆ ՆԱՂԴՅԱՆ

Գիտական խմբագիր՝
հոգեբանական գիտությունների թեկնածու
ՆԱՐԻՆԵ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա 597 **Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր** (գիտական հոդվածների ժողովածու). - Եր.: «Ասողիկ» հրատ., 2016.- 280 էջ:

Սույն ժողովածուում ներկայացված են ԵՊՀ Անձի հոգեբանության ամբիոնի դասախոսների, ասպիրանտների և մագիստրոսների հոդվածները: Ժողովածուում ընդգրկվել են անձի հոգեբանության հիմնահարցերին վերաբերող տեսական և կիրառական բնույթի հոդվածներ: Դիտարկվում են անձի ձևավորման և կայացման գործում զարգացման, սոցիալական, մշակութային և էքզիստենցիալ խնդիրներ:

Հոդվածների ժողովածուն կարող է օգտակար լինել անձի հոգեբանության ոլորտով հետաքրքրված մասնագետների և ուսանողների համար:

ՀՏԴ 159.923
ԳՄԴ 88.37

ISBN 978-9939-50-308-0

© Երևանի պետական համալսարան, 2016
© Խաչատրյան Ն. (խմբ.), 2016

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 5

ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Նարինե Խաչատրյան
ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՍՕՐ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ 9

Սվետլանա Հարությունյան
ՆԱՐԱՏԻՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ 16

ԱՆՁ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Լիլիթ Գարգրցյան
ՍԵՓԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԸՆԿԱԼՈՒՄՆ ՈՒ ԴՐԱ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 33

Իրինա Խանամիրյան
ԾՆՈՂԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆԱՑԻՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ 42

Էլեոնորա Զաքարյան, Մարինե Միքայելյան
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ԲԱԶՄԱԲՆՈՒՅԹ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԻՔՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 49

Սոսե Խաչիբաբյան
ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 61

Մանե Տոնոյան
ԾԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՍՈՒՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ 68

Կարինե Հարությունյան
ՆԿԱՐԻ ԴԵՐԸ ԵՎ ՊԱՏԿԵՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ 77

Արմինե Հայրապետյան, Լիլիթ Գարգրցյան
ԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ 84

ԱՆՁ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Աննա Հակոբջանյան
ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՎԱՐՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ 97

Լիանա Սարգսյան, Սվետլանա Հարությունյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՐԺԵՔԱՅԻՆ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈԽԿԱՊՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 113

Լիլիթ Ավետիսյան, Սոնա Մանուսյան
ԿԱՄԱՎՈՐԻ ՕԳՆՈՂԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՁԻ ՆՈՒՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ 128
Քնարիկ Առաքելյան
ԱՆՁԻ ԶՈՀԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ 145
Մարիաննա Գևորգյան, Նարինե Խաչատրյան
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՅՆ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ 153
Անժելա Աֆյան, Նարինե Խաչատրյան
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 163

ԱՆՁ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Սոնա Մանուսյան
ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄԸ 179
Նվարդ Գրիգորյան, Աննա Հակոբջանյան, Մերի Գրիգորյան
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՄՈԶՄՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՔԵՐ 193
Աստղիկ Սերոբյան
ԱՆՁՆԱՅԻՆ ԳԾԵՐ ԵՎ ԱՈՒՏՈԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԵՐԻ, ՀՈՒՅՆԵՐԻ ԵՎ ԱՍՈՐԻՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 210
Անուշ Մկրտչյան
ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ 227
Անի Մովսիսյան, Նարինե Խաչատրյան
ՈՐՈՇ ԱՆՁՆԱՅԻՆ ՓՈՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐ ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ ԱՆՑԱԾ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ 238

ԱՆՁ ԵՎ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ԽՆԴԻՐՆԵՐ

Լուսինե Աղաբեկյան
ՄԱՀՎԱՆ ՀԵՏ ԲԱԽՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆ 257
Նարինե Ադամյան, Իրինա Խանամիրյան
ԱՌՈՂՋԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՅՐԵՐԻ ԱՐԺԵԻՄԱՍՏԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 263
Կարինե Գրիգորյան
ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՀՎԱՆ ՎԱԽԻ ՖԵՆՈՄԵՆՈԼՈԳԻԱՆ. ՏԱՐԲԵՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 273

ԱՐԺԵՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Անուշ Մկրտչյան

Ներածություն

Ժամանակակից կյանքում մշակութային, քաղաքական, սոցիալական փոփոխությունների հետ մեկտեղ փոխվում են նաև անձի արժեքները, աշխարհընկալումները, վարքաձևերը, ինչպես նաև աշխարհի, մարդկանց, բնության հետ հարաբերությունները: Այս տեսանկյունից այժմյան հասարակությունում ավելի արդիական են դառնում մարդու արժեքային կողմնորոշումները, մարդ-հասարակություն փոխհարաբերությունները հասկանալու և վերլուծելու միտումը, արժեքների տեղը և դերը՝ որպես անձի ինքնության բաղադրիչներ դիտարկելը: Հասարակությունում առկա արժեքները և նորմերը ձևավորվում են տարիների պատմական և մշակութային զարգացման ընթացքում, ինչն էլ վկայում է այն մասին, որ արժեքների ձևավորումը մշակույթի ազդեցությունն անմիջականորեն իր վրա կրող գործընթաց է:

Վերջին տարիներին արժեքների ուսումնասիրությունը գտնվում է բազմաթիվ հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ գիտնականների, ինչպես, օրինակ, Գ. Հովստեդենի, Շ. Շվարցի կարծիքով, արժեքները համարվում են մշակույթի հիմնական բաղադրիչները [8, 12]: Մշակութային արժեքները ձևավորում են անհատական և խմբային համոզմունքներ, նպատակներ և վարքաձևեր: Ըստ այդմ, հասարակական կյանքի մշակութային և սոցիալական փոփոխությունները հասկանալու համար կարևորվում են արժեքային կողմնորոշումների ուսումնասիրությունները, մասնավորապես, թե ինչ տեղ են զբաղեցնում արժեքներն անհատական և սոցիալական տիրույթներում, և ինչպիսին են տարբեր հասարակություններում մարդկանց արժեքային նախապատվությունները: Ստորև տեսական վերլուծությամբ կշարադրվեն անձի արժեքային համակարգին բնորոշ առանձնահատկությունները, մասնավորապես կներկայացվի՝ ինչպես է սահմանվում արժեքը, ինչ մեկնաբանություններ է այն կրում, ինչպես նաև մի շարք հեղինակների տեսություններ՝ ուղղված մշակութային արժեքների ուսումնասիրմանը:

Արժեքների սահմանումներ և մեկնաբանություններ

Արժեքներն առավել լավ հասկանալու համար նախ պարզաբանենք, թե ինչպես են սահմանվում դրանք տարբեր բառարաններում: «Արժեք» բառն

առաջ է եկել ֆրանսերեն «valoir» բառից, որը նշանակում է արժանի լինել [5, էջ 401]: Արժեքն ինչ-որ բանի կարևորությունը, նշանակությունը և օգտակարությունն է: Արժեքային համակարգը կատարում է ամենօրյա կողմնորոշման դեր մարդու առարկայական և սոցիալական գործունեության մեջ:

Օքսֆորդի բառարանում «արժեք» թարգմանաբար նշանակում է, որ ինչ-որ բան արժեք ունի, կարևոր է կամ օգտակար: Արժեքները հանդես են գալիս որպես վարքի սկզբունքներ կամ ստանդարտներ, անձի դատողություններն այն մասին, թե ինչն է կարևոր կյանքում [6, էջ 690]:

Հայերեն բառարանում *«արժեք»* բառը մեկնաբանվում է մի շարք հոմանիշներով, ինչպիսիք են *գին, գնահատանք, յարգ (օգտակար կամ ընտիր հատկություն, արժանիք)* [1, էջ 45]: Այլ հայերեն բառարաններում ևս տրվում է «արժեք» հասկացության մեկնաբանությունը որպես ուշադրության արժանի հատկություն, նշվում է վերջինիս հասարակական օգտակարության մասին [2, էջ 265]: Գրեթե բոլոր մեկնաբանություններում «արժեք» հասկացությանը տրվում է նշանակալիի, կարևորի մեկնաբանություն:

Տարբեր պատմական ժամանակահատվածներ և տարբեր փիլիսոփայական դպրոցներ ունեն իրենց ավանդույթն արժեքների մեկնաբանման հարցում: Անտիկ, իսկ հետո նաև միջնադարյան փիլիսոփայության մեջ արժեքները նույնացվում էին կեցության հետ: Արժեքները դիտարկվում են հենց կեցության մեջ: Դեռևս անտիկ դարաշրջանում տարբեր պատկերացումներ կային արժեքների բնույթի մասին: Պլատոնի կարծիքով՝ բարձր արժեքները կրում են բացարձակ բնույթ, բայց սոֆիստների տեսանկյունից բոլոր արժեքներն անհատական են և հարաբերական: Ըստ Արիստոտելի՝ մի կողմից առանձնացվում են ինքնաբավ արժեքներ, որոնց թվին են պատկանում մարդը, երջանկությունը, արդարությունը և այլն, և մյուս կողմից՝ նա նշում է մի շարք արժեքների հարաբերական բնույթի մասին: Արժեքների հիմնախնդիրը լայն նշանակությամբ առաջ է եկել մշակութային ավանդույթների արժեզրկման և հասարակության գաղափարական հիմքերի վարկաբեկման դարաշրջանում: Հունական ժողովրդավարության ճգնաժամը ստիպեց Սոկրատին առաջին անգամ առաջ քաշել հետևյալ հարցը. «Ի՞նչն է լավ»: Անտիկ փիլիսոփայության մեջ արժեքային բնութագրիչները մտնում էին իրականության, իրական կեցության հասկացությունների մեջ [4, էջ 286]:

Փիլիսոփայության մեջ գոյություն ունի արժեքների բնույթի մասին ուսմունք, որը կոչվում է ակսիոլոգիա (հունարեն axios – արժեք, logos - գիտություն) [նույն տեղում, էջ 285]: Ակսիոլոգիան փիլիսոփայական ուսմունք է արժեքների բնույթի, իրականության մեջ նրանց տեղի և արժեքային աշխարհի կառուցվածքի մասին: Ակսիոլոգիան՝ որպես փիլիսոփայական

հետազոտության ինքնուրույն ոլորտ, առաջ է եկել այն ժամանակ, երբ կեցություն հասկացությունը բաժանվում է երկու մասերի՝ իրականություն և արժեք: Ակսիոլոգիան ուսումնասիրում է խնդիրներ՝ կապված արժեքների բնույթի, ամբողջական արժեքային համակարգի, տարբեր արժեքների հարաբերակցությունների հետ:

20-րդ դարի սկզբներին, երբ ակսիոլոգիան դարձավ ինքնուրույն փիլիսոփայական բնագավառ, ձևավորվեցին արժեքների յուրահատուկ տեսություններ՝ բնագիտական պսիխոլոգիզմ, ակսիոլոգիական տրանսցենդենտալիզմ, պերսոնոլոգիական օնթոլոգիզմ և արժեքների սոցիոլոգիական կոնցեպցիաներ [նույն տեղում, էջ 290]:

Բնագիտական պսիխոլոգիզմ ուղղության ներկայացուցիչներն (Ջ. Դյուի, Ռ. Պերի և ուրիշներ) արժեքների աղբյուրը տեսնում էին մարդու կենսաբանական և հոգեբանական պահանջմունքներում, իսկ արժեքները համարվում էին էմպիրիկ իրականության հնարավոր փաստեր: Այս տեսանկյունից յուրաքանչյուր առարկա, որը բավարարում է մարդկանց որևէ պահանջմունք, համարվում է արժեք: *Ակսիոլոգիական տրանսցենդենտալիզմի* ներկայացուցիչ Վ. Վինդելբանդի ուսմունքի համաձայն՝ աշխարհը կազմված է երկու ոլորտից. իրականություն (էմպիրիկ տրված փաստեր) և արժեքներ (իդեալական նորմեր): Ըստ Վ. Վինդելբանդի՝ յուրաքանչյուր արժեք դրսևորվում է որպես նպատակ ինքն իրենով, նրան ձգտում են հենց իր, այլ ոչ թե նյութական հետաքրքրության, շահի կամ զգայական հաճույքի համար: Արժեքը իրականությունը չէ, այլ իդեալը, որի կրողը տրանսցենդենտալ սուբյեկտն է: Համաձայն Գ. Կոգենի՝ ճշմարիտ արժեքները ծնում են «մաքուր կամք», որի կրողը կրկին համարվում է ոչ թե անհատական, այլ տրանսցենդենտալ սուբյեկտը: *Պերսոնոլոգիական օնթոլոգիզմի* ներկայացուցիչ Մաքս Շելերը գտնում էր, որ արժեքը, լինելով օբյեկտիվ, չի կարող դրսևորվել տրամաբանական մտածողության ձևերում: Արժեքների սոցիոլոգիական ուղղության ներկայացուցիչ, գերմանացի մտածող Մ. Վեբերը նշում է, որ արժեքը նորմա է, որը սոցիալական սուբյեկտի համար ունի որոշակի նշանակություն: Մ. Վեբերն արժեքի գլխավոր գիծը համարում էր «պատմականությունը»՝ ենթադրելով, որ այն միայն տվյալ ժամանակահատվածի ընդհանուր դիրքորոշումների արտահայտումն է: Վեբերն առաջին անգամ նշեց արժեքների՝ մշակույթի, հասարակության բնավորության վրա ազդեցության մասին:

Ամփոփելով տարբեր պատմական ժամանակահատվածներում արժեքների մեկնաբանման փիլիսոփայական հայեցակարգերը՝ պարզ է դառնում, որ տարբեր դարաշրջաններում արժեքները դիտարկվում էին

որպես կեցության բաղադրիչ մաս, որպես սոցիալականացվող անձի համար կարևոր նորմատիվ չափանիշ, ինչը պայմանավորում է անհատի համոզմունքների և դիրքորոշումների ուղղվածությունը:

Մշակութային արժեքներին ուղղված հետազոտություններ

Հասարակության զարգացման միտումներին, տնտեսական, քաղաքական հասարակարգերի փոփոխություններին զուգընթաց՝ արժեքների հիմնախնդիրը բերվում է կոնկրետ հետազոտական դաշտ, ստեղծվում են ուսումնասիրություններ իրականացնելու կիրառական հայեցակարգեր: Հետազոտողների մի լայն շրջանակ ուսումնասիրում է արժեքները՝ վերջիններս դիտարկելով մշակութային տարբեր խմբերում առկա արժեքային համակարգի տարբերությունները և նմանությունները: Բավական լայն հետազոտություններից է «Համաշխարհային արժեքների հարցումը» (World Value Survey) [9]: Այն գլոբալ հետազոտական նախագիծ է, որը բացահայտում է մարդկանց արժեքները և համոզմունքները, թե ինչպես են վերջիններս փոխվել ժամանակի ընթացքում, և ինչ սոցիալական ու քաղաքական ազդեցություն ունեն նրանք: 1981 թվականից սկսած՝ իրականացվել են հարցումներ գրեթե հարյուր երկրներում: «Համաշխարհային արժեքների հարցումը» չափում, վերահսկում և վերլուծում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են ժողովրդավարության աջակցությունը, հանդուրժողականությունն օտարազգիների և էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ, գլոբալիզացիայի ազդեցությունը, ինչպես նաև վերաբերմունքը միջավայրին, աշխատանքին, ընտանքին, քաղաքականությանը, ազգային ինքնությանը, մշակույթին և սուբյեկտիվ բարեկեցությանը: «Համաշխարհային արժեքների հարցման» տարբեր տարիների չափումները ցույց են տվել, որ արժեքային կողմնորոշումները սերտորեն կապված են հասարակության տնտեսական և քաղաքական համակարգերի ձևավորման հետ և կարևոր դեր ունեն վերջիններիս համար:

Արժեքների տեսությունների մեջ իրենց ուրույն տեղն ունեն Կ. Քլաքհոնի (C. Kluckhohn) գաղափարները [մեջբերվում է ըստ 7]: Ըստ հեղինակի, արժեքը ցանկալիի պատկերացումն է, որն ազդում է առկա միջոցների ընտրության, ինչպես նաև գործողության վերջնական նպատակների վրա: 1949թ. Քլաքհոնը սկսեց արժեքային կողմնորոշումների երկարաժամկետ հետազոտություն: Գլխավոր մեթոդոլոգիական մոտեցումը, որը նա զարգացրել է իր կնոջ՝ Ֆ. Քլաքհոնի (F. Kluckhohn) և գործընկերների հետ միասին, արժեքային կողմնորոշումների տեսությունն է: Նրանք կարծում էին,

որ միջմշակութային հասկացմանը և շփմանը կարող է նպաստել տրված մշակութային կողմնորոշումների վերլուծությունը մարդու կյանքի հինգ հիմնական կարևոր ոլորտներում.

1. Մարդկային բնույթ (բարի, չար, ...)
2. Մարդ–բնություն հարաբերություններ (ենթակա բնությանը, գերիշխող բնությանը և ներդաշնակություն բնության հետ)
3. Ժամանակ (անցյալ/ավանդական, ներկա/հաճույք, ապագա/հետաձգված բավականություն)
4. Ակտիվություն (լինել, դառնալ/ներքին զարգացում, անել/պայքարել)
5. Սոցիալական հարաբերություններ (հիերարխիկ, կոլատերալ/կոլեկտիվ-էգալիտար կամ անհատապաշտական)

Կ. Քլաքհոնը սահմանում էր արժեքը հետևյալ կերպ. «Հասկացություն՝ բացահայտ կամ թաքնված, որը տարբերակում է անհատին կամ բնութագրական է խմբի համար, որն ընտրության ազդեցություն է կրում հասանելի եղանակներից, իմաստներից և գործողություններից» [նույն տեղում, էջ 3]:

Ֆ. Քլաքհոնը և Ֆ. Սթրոթբեկը (F. Kluckhohn & F. Strodtbeck) մշակել են արժեքների իրենց տեսությունը՝ շարունակելով Կ. Քլաքհոնի տեսակետները [նույն տեղում]: Ըստ նրանց, մարդկանց վերաբերմունքը հիմնված է այն արժեքների վրա, որոնք նրանք ունեն: Ֆ. Քլաքհոնի և Ֆ. Սթրոթբեկի արժեքային կողմնորոշման տեսությունը ենթադրում է, որ բոլոր հասարակությունները պետք է պատասխանեն սահմանափակ քանակով ունիվերսալ խնդիրների. տարբեր մշակույթներ ունեն տարբեր նախապատվություններ: Նրանք առանձնացնում են հետևյալ երեք հիմնական ենթադրությունները.

- Գոյություն ունի մարդկային ընդհանուր խնդիրների սահմանափակ քանակ, որոնց համար բոլոր մարդիկ բոլոր ժամանակներում պետք է գտնեն լուծումներ:
- Բոլոր հասարակություններում գոյություն ունեն միևնույն խնդրի լուծման տարբեր եղանակներ:
- Լուծման այլընտրանքներ գոյություն ունեն բոլոր հասարակություններում, բոլոր ժամանակներում, սակայն տարբեր նախընտրություններ են տրվում:

Վերոնշյալ հեղինակների մոտեցումը բավական էկլեկտիկ է. նրանք օգտագործում են բազմաթիվ մեթոդաբանական մոտեցումներ իրենց ուսումնասիրություններում:

Արժեքների մեկ այլ բազմակողմանի տեսությունը պատկանում է Մ. Ռոկիչին (M. Rokeach): Ըստ հեղինակի՝ արժեքները բնութագրվում են հետևյալ հատկություններով [10].

1. Մարդուն հատուկ արժեքների ընդհանուր քանակն այնքան էլ մեծ չէ:
2. Բոլոր մարդիկ ունեն միևնույն արժեքները, սակայն տարբեր մակարդակներով:
3. Արժեքները կազմավորված են համակարգում:
4. Արժեքների աղբյուրները դիտվում են մշակույթում, հասարակությունում և անձի մեջ:
5. Գրեթե բոլոր սոցիալական ֆենոմենները դետերմինացված են արժեքներով:

Հեղինակն առանձնացրել է արժեքների 2 մեծ խումբ՝ տերմինալ արժեքներ և ինստրումենտալ արժեքներ: Տերմինալ արժեքները համոզմունքներն են նրանում, որ անհատական գոյության վերջնական արդյունքն անձնական կամ հասարակական տեսանկյունից արժե նրան, որպեսզի նրան ձգտեն: Դրանք նպատակ-արժեքներն են, որոնք արտացոլում են երկարատև կյանքի հեռանկարը, որոշում են կյանքի իմաստը, կարևորը և նշանակալին նրանում: Ինստրումենտալ արժեքները դատողություններն են այն մասին, որ գործողության ինչ-որ պատկեր համարվում է անձնական և հասարակական տեսանկյունից նախընտրելի ցանկացած իրավիճակում: Դրանք միջոցի արժեքներ են, որոնք որոշում են մարդու վարքի կոնկրետ տեսակը կոնկրետ իրավիճակում:

Արժեքների մասին իր առանձին տեսությունն է մշակել Մ. Մեսեյը (M. Massey) [մեջբերվում է ըստ 11]: Հեղինակը գտնում է, որ մարդկանց արժեքները ձևավորվում են մի շարք փուլերի ընթացքում: Առաջին փուլը «դրոշմի» փուլն է, որը տևում է մինչև 7 տարեկան: Ըստ Մ. Մեսեյի՝ երեխաներն այս փուլում նման են «սպունգի», կլանում են այն ամենը, ինչը տեղի է ունենում իրենց շրջապատում և ընդունում են գրեթե ամեն ինչ որպես ճշմարտություն, հատկապես, եթե դա տրվում է ծնողների կողմից: Երկրորդ փուլը «կրկնօրինակման» փուլն է, որն ընդգրկում է 8-13 տարեկան հասակը. երեխաները կրկնօրինակում են մարդկանց, մասնավորապես՝ իրենց ծնողներին: Երրորդ փուլը «սոցիալականացման» փուլն է, որը տևում է 13-ից մինչև 21 տարեկանը: Այս փուլում մարդը հիմնականում իր վրա է կրում հասակակիցների ազդեցությունը, և ըստ Մ. Մեսեյի՝ 21 և ավելի բարձր տարիքի մարդկանց արժեքների ձևավորման վրա կարևոր ազդություն ունեն նշանակալի հուզական իրադարձությունները:

Արժեքների բնույթի մասին մեծ հետազոտություն և առանձին տեսություն է մշակել Շ. Շվարցը [12]: Այս տեսությանն առավել մանրամասն անդրադառնալը և մեզ համար տեսական և հետագայում՝ նաև գործնական վերլուծության հիմք ընդունելը պայմանավորված է նրանով, որ այն մեզ հնարավորություն է տալիս արժեքները դիտարկել ավելի համընդհանուր,

համամարդկային տեսանկյունից, ինչպես նաև բազմակողմանի կապեր և վերլուծություններ կատարել ինքնության և արժեքների համատեքստում: Ըստ հեղինակի, երբ մենք մտածում ենք մեր արժեքների մասին, մենք մտածում ենք, թե ինչն է մեզ համար կարևոր կյանքում: Մեզանից յուրաքանչյուրն ունի բազմաթիվ արժեքներ (օրինակ՝ ձեռքբերման, անվտանգության, կամեցողության)՝ կարևորության տարբեր աստիճաններով: Որոշակի կոնկրետ արժեք կարող է կարևոր լինել մեկի, բայց բացարձակ անկարևոր՝ մեկ այլ մարդու համար: Արժեքների տեսություններում կարևորվում է այն հայեցակարգը, որտեղ առանձնացվում են արժեքների ներքոնշյալ վեց հիմնական հատկանիշները [նույն տեղում, էջ 4].

1. Արժեքները համոզմունքներ են: Մարդիկ, որոնց համար անկախությունը կարևոր արժեք է, «սթափվում» են, երբ նրանց անկախությունը վտանգվում է, հուսահատվում են, երբ անկարող են լինում այն պաշտպանելու, և վերջապես երջանիկ են, երբ կարող են վայելել այն:
2. Արժեքները կապված են ցանկալի նպատակների հետ, որոնք մոտիվացնում են գործողությունները: Մարդիկ, որոնց համար հասարակական կարգը, արդարությունը կարևոր արժեքներ են, մոտիվացված են հետապնդել այդ նպատակները:
3. Արժեքները լայն և ընդգրկուն հասկացություններ են: Այս հատկանիշը տարբերակում է արժեքներն ավելի նեղ հասկացություններից, ինչպիսիք են նորմերը և մոտեցումները, որոնք սովորաբար վերաբերում են կոնկրետ գործողությունների, օբյեկտների կամ իրավիճակների:
4. Արժեքները ծառայում են որպես սկզբունքներ կամ չափանիշներ: Արժեքներն ուղղորդում են գործողությունների, մարդկանց, իրավիճակների գնահատումը կամ ընտրությունը: Մարդիկ որոշում են, թե ինչն է լավ, ինչը՝ վատ, արդարացնում կամ մեղավոր են ճանաչում, գործում կամ խուսափում են՝ հիմնվելով իրենց համար թանկ արժեքների հնարավոր հաջորդականության վրա:
5. Արժեքները դասավորվում են ըստ կարևորության: Մարդկանց արժեքները ձևավորում են արժեքի առաջնահերթությամբ դասավորված համակարգ, որը բնութագրում է նրանց որպես անհատներ, արդյո՞ք նրանք կարևորություն են տալիս ավելի շատ ձեռքբերմանը, քան արդարությանը, նորարարությանը կամ ավանդականին:
6. Մարդու գործողություններն ուղղորդվում են բազմաթիվ արժեքներով: Ցանկացած վարքագծի կամ վերաբերմունքի վրա ազդում են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ արժեքներ:

Ըստ Շ. Շվարցի՝ վերը թվարկված առանձնահատկությունները վերաբերում են բոլոր արժեքներին: Արժեքների տեսության մեջ Շ. Շվարցն առանձնացնում է տասը արժեքներ՝ ըստ այն մոտիվացիայի, որն ընկած է նրանց հիմքում: Ենթադրվում է, որ այս արժեքները ներառում են տարբեր դրդապատճառների շրջանակ՝ ճանաչված տարբեր մշակույթներում: Տեսության համաձայն՝ այս արժեքները, ամենայն հավանականությամբ, համամարդկային են (ունիվերսալ), քանի որ հիմնվում են մարդկային գոյության մեկ կամ երեքից ավելի համամարդկային պահանջների վրա, որն օգնում է նրանց հաղթահարել: Անհատներն ինքնուրույն չեն կարող հաջողությամբ հաղթահարել մարդկային գոյության այս պահանջները: Փոխարենը՝ մարդիկ պետք է առաջ քաշեն համապատասխան նպատակներ, որպեսզի կարողանան հաղթահարել դրանք: Արժեքները սոցիալապես ցանկալի հասկացություններ են, որոնք ներկայացնում են նպատակները հոգեպես, իսկ բառապաշարն օգնում է արտահայտել դրանք սոցիալական շփման դաշտում: Էվոլյուցիոն տեսանկյունից այս նպատակները և դրանք արտահայտող արժեքներն ունեն գոյատևման կարևոր նշանակություն:

Շ. Շվարցը հաջորդաբար խոսում է տասը արժեքների մասին՝ նշելով այն լայն նպատակները, որոնք ընկած են տվյալ արժեքի հիմքում, տալով նաև համամարդկային պահանջների հիմնավորումը [13]:

1. *Ինքնուրույնություն* (Self-direction). բնութագրական է անկախ միտքը և գործողությունը. ընտրել, ստեղծել, որոնել: Ինքնուրույնությունը բխում է օրգանիզմի կարիքներից՝ հսկողության ապահովման համար:
2. *Ստիմուլյացիա* (Stimulation). բնութագրական են հուզմունքը, նորույթը և մարտահրավերները կյանքում: Ստիմուլյացիայի արժեքները բխում են օրգանիզմի կարիքներից՝ բազմազանության և ստիմուլյացիայի ապահովման համար:
3. *Հեդոնիզմ* (Hedonism). բնութագրական է հաճույքը կամ զգայական բավարարվածությունը: Հեդոնիստական արժեքները բխում են օրգանիզմի կարիքներից, և հաճույքը կապված է դրանց բավարարման հետ:
4. *Ձեռքբերումներ* (Achievement). բնութագրական է անձնական հաջողությունը՝ սոցիալական ստանդարտներին համապատասխան կոմպետենտություն դրսևորելու միջոցով:
5. *Իշխանություն* (Power). բնութագրական են սոցիալական կարգավիճակը և հեղինակությունը, մարդկանց և ռեսուրսների վերահսկումը կամ գերիշխանությունը:

6. *Անվտանգություն* (Security). բնութագրական են անվտանգությունը, ներդաշնակությունը: Անվտանգության արժեքները բխում են անհատական և խմբային պահանջներից: Գոյություն ունի անվտանգության արժեքների երկու ենթատեսակ: Մեկն ընկած է անհատական հիմնական հետաքրքրությունների, մյուսը՝ ավելի լայն հետաքրքրությունների հիմքում:
7. *Կոնֆորմություն* (Conformity). բնութագրական է գործողությունների զսպվածությունը: Կոնֆորմության արժեքները շեշտում են ինքնազսպվածությունն առօրյա փոխհարաբերություններում:
8. *Ավանդականություն* (Tradition). բնութագրական են հարգանքը, տվյալ մշակույթի սովորույթների և գաղափարների ընդունումը: Խմբերն ամենուր զարգացնում են խորհրդանիշներ, գաղափարներ և համոզմունքներ, որոնք ներկայացնում են իրենց միասնական փորձը և ճակատագիրը:
9. *Կամեցողություն* (Benevolence). բնութագրական է ամրապնդելու և պահպանելու այն մարդկանց բարօրությունը, որոնց հետ մարդն ավելի հաճախ է հաստատում անձնական կոնտակտներ:
10. *Ունիվերսալիզմ* (Universalism). բնութագրական են հասկացումը, արժևորումը, հանդուրժողականությունը և պաշտպանությունը՝ ի շահ բոլոր մարդկանց բարօրության և բնությունը պահպանելու ցանկության: Համընդհանուր արժեքները բխում են անհատների և խմբերի գոյատևման պահանջներից:

Հ. Տրիանդիսը (H. Triandis) մշակույթները համեմատելիս առաջարկում է կիրառել մշակութային սինդրոմ հասկացությունը [մեջբերվում է ըստ 3]: Մշակութային սինդրոմը նա սահմանում է որպես «սուբյեկտիվ մշակույթի պատերն, որը ներառում է մեկ ամբողջական թեմայի մեջ ամփոփված դիրքորոշումներ, արժեքներ, համոզմունքներ, վարքաձևեր, ես-ի սահմանումներ՝ հասկանալի միևնույն լեզվին տիրապետող, կոնկրետ պատմական ժամանակահատվածում և աշխարհագրական տարածքում ապրող մարդկանց համար»:

Սոցիոլոգ Գ. Հոֆստեդը նույնպես զարգացրել է իր տեսակետը՝ ուսումնասիրելով արժեքային կողմնորոշումները մշակութային համատեքստում [8]: Գ. Հոֆստեդի մշակութային տարածության տեսությունը նկարագրում է հասարակական մշակույթի ազդեցությունը նրա անդամների արժեքների վրա, և նաև այն, թե ինչպես են այդ արժեքները հարաբերակցվում վարքի հետ: Այս տեսությունը լայնորեն կիրառվել է տարբեր ոլորտներում՝ որպես հետազոտության հարացույց, մասնավորապես՝ միջմշակութային հետազոտության մեջ: Իր տեսության մեջ նա առաջ է քաշում չորս չափում,

որոնցում մշակութային արժեքները կարող են վերլուծվել. ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ, խուսափում անորոշությունից, իշխանության դիստանցիա, ֆեմինինություն–մասկուլինություն: Հետագայում Գ. Հոֆստեդն առաջ քաշեց հինգերորդ և վեցերորդ գործոնները, որոնք են՝ երկարաժամկետ կամ կարճաժամկետ կողմնորոշում և հաճույք-ինքնակառավարում:

Արժեքային կողմնորոշումների, համոզմունքների, քաղաքական և տնտեսական վարքի դիրքորոշումների վերաբերյալ լայնածավալ հետազոտություն է իրականացվել Հայաստանում [3]: Համաձայն հետազոտության արդյունքների՝ հայկական ընտրանքի համար առավել բնութագրական են խմբին ուղղված արժեքները, մասնավորապես՝ սեփական խմբի հետ կապվածության և հարաբերությունների պահպանման միտումները, որն ապահովում է համերաշխություն, հարմարում և անորոշության նվազեցում: Առավել քիչ բնութագրական են անհատականությունը շեշտադրող արժեքները, մասնավորապես՝ մարտահրավերներ ընդունելու, զգայական բավարարվածություն ունենալու ցանկությունները: Կատարված հետազոտությունը թույլ է տալիս հասկանալ որոշակի վարքային պատերներ և դիրքորոշումներ, որոնք այսօր ձևավորվել են հայ հասարակության սոցիալ-մշակութային փոփոխություններին համընթաց: Ավելի նեղացնելով հետազոտության արդյունքների կիրառելիության նշանակությունը՝ կարող ենք շեշտադրել, որ դրանք հնարավորություն են տալիս հասկանալ այն արժենորմատիվ և համոզմունքային համատեքստը, որում այսօր հայ քաղաքացին որոշումներ է ընդունում իր սոցիալական ներգրավվածության վերաբերյալ [նույն տեղում, էջ 125]:

Ամփոփելով արժեքների ուսումնասիրման տեսական և կիրառական ասպեկտները՝ մենք տեսնում ենք, որ արժեքների հայեցակարգի վրա հիմնված հետազոտությունները կարող են վերաբերել մարդկային կյանքի տարբեր ասպեկտներին: Արժեքներն առանցքային են մարդկային մտքի, զգացմունքների և վարքագծի մեջ: Դրանք մշակույթի անքակտելի մասն են կազմում, և, հետևաբար, արժեքների միջմշակութային հետազոտությունները թույլ են տալիս հասկանալ մշակութային տվյալ ժամանակաշրջանին բնորոշ խնդիրները: Տարբեր տեսաբաններ օգտագործում են տարբեր մշակութային չափումներ (ինդիվիդուալիզմ-կոլեկտիվիզմ, ֆեմինինություն–մասկուլինություն, ներդաշնակություն, հավասարություն և այլն), որոնց բազմազանությունը թույլ է տալիս վեր հանել արժեքներով պայմանավորված հասարակական առանձնահատկությունների ամբողջ համախումբը:

Դիտարկված մշակութային չափումների բազմազանությունը, դրանց կիրառելիությունը հնարավորություն են տալիս հասկանալ

սոցիալ-տնտեսական և սոցիալ-քաղաքական տարաբնույթ գործընթացների և փոփոխությունների պատճառները և հետևանքները: Այդ պատճառով գտնում ենք, որ արժեքների միջմշակութային և ներմշակութային ուսումնասիրությունները կիրառական նշանակություն ունեն տարբեր հասարակական խնդիրների ճանաչման և հաղթահարման գործում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Բառգիրք հայերէն լեզուի*, Անդրանիկ Վրդ. Կռանեան, Պէյրութ, 1998, Հասանելի է
2. http://www.nayiri.com/search?l=hy_LB&dt=HY_HY&r=0&query=%D5%A1%D6%80%D5%AA%D5%A7%D6%84
3. **Մալխասեանց, Ս.** *Հայերէն բացատրական բառարան*, Հայկական ՍՍՌ Պետական Հրատարակչութիւն, Երևան, 1944:
4. **Խաչատրյան, Ն., Մանուսյան, Ս., Սերոբյան, Ա., Գրիգորյան, Ն., Հակոբջանյան, Ա.** *Մշակույթ, արժեքներ, համոզմունքներ. Վարքի կողմնորոշիչները փոփոխվող հայ հասարակությունում.* Երևան, Հեղ. հրատ., 2014:
5. **Лавриненко, В.** *Философия:* Учебник, под ред. проф. В. Н. Лавриненко, М., Юристь. 2004.
6. **Cobbett, W.** (ed), *A New French and English Dictionary*, London, Mills, Jowet and Mills, 1833.
7. **Hawker, S.** (ed), *Pocket Oxford Thesaurus*, New York, Oxford University Press, 2008.
8. **Hills, M.** Kluckhohn and Strodtbeck's Values Orientation Theory. *Online Readings in Psychology and Culture, 4*(4), 2002. Հասանելի է http://dx.doi.org/10.9707/2307-0919.1040
9. **Hofstede, G.** Dimensionalizing Cultures: The Hofstede Model in Context. *Online Readings in Psychology and Culture, 2*(1), 2011. Հասանելի է *http://dx.doi.org/10.9707/2307-0919.1014*
10. **Inglehart, R., & Baker, E.** Modernization, cultural change, and the persistence of traditional values. *American Sociological Review*, 65, 2000, pp. 19-51.
11. **Rokeach, M.** *The nature of human values*. New York, The Free Press, 1973.
12. ***Samson, S. A.*** Value System Processing Study Guide. *Faculty publications and presentations, paper 210, 1979.* Հասանելի է *http://digitalcommons.liberty.edu/cgi/viewcontent.cgi?article=1216&context=gov_fac_pubs*
13. **Schwartz, S. H.** Les valeurs de base de la personne. Thèorie, mesures et applications [Basic human values: Theory, Measurement and Applications]. *Revue Française de sociologie*, 42, 2006, pp. 249-288.
14. **Sagiv, L., and Schwartz, S. H.** Value priorities and subjective well-being: direct relations and congruity effects. *European Journal of Social Psychology,* 30(2), 2000, pp. 177-198.